ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՒՅԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 45 - 46 (16950) ՇԱԲԱԹ 12 ՀՈՒՆԻՍԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ԼԻՏՎԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԺՈՒԺԱԲԵՐՎԵԺ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 10-11-ը երկօրյա պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Լիտվայի նախագահ Գիտանաս Նաուսեդան:

Լիտվայի նախագահի Վրաստան կատարած առաջին պաշտոնական այցի շրջանակներում, նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի, խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ: Այցի ընթացքում, Լիտվայի նախագահը ծաղկեպսակ դրեց Վրաստանի միասնության համար զոհված հերոսների հուշակոթողին:

Լիտվայի նախագահն այցելեց բռնազավթված Ցխինվալիի շփման գիծ, ծանոթացավ հարակից գյուղերում տիրող իրավիճակին:

Վրաստանի վարչապետի եւ Լիտվայի նախագահի հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների հարաբերությունները, որոնք հիմնված են ընդհանուր արժեքների ու սկզբունքների վրա, ընդգծվեցին երկկողմ հարաբերությունների չա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

22 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ 4 ԸՆՏՐԱԴԱՇԻՆՔ՝ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանում հունիսի 7-ից պաշտոնապես մեկնարկեց հունիսի 20-ին անցկացվելիք արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավը, որը կտեւի հունիսի 18-ը ներառյալ, ժամը՝ 24:00-ն: Ճիշտ է, ընտրությունները կանցկացվեն հունիսի 20-ին, սակայն էլեկտրոնային եղանակով քվեարկությունը կսկսվի հունիսի 11-ին, ժամը 08:00-ին եւ կտեւի մինչեւ հունիսի 13-ի ժամը 20:00-ն:

Ընտրություններին մասնակցում է 26 քաղաքական ուժ՝ 22 կուսակցություն եւ 4 դաշինք:

Ընտրողներն ընտրատեղամասում ստանալու են մասնակցող քաղաքական ուժերի թվին համապատասխան քվեաթերթիկներ, ընտրելու են դրանցից միայն մեկը, դնելու են ծրարի մեջ ու գցելու քվեատուփը: Ընտրողը քվեաթերթիկի վրա գրիչով որեւէ նշում չի կատարում:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հունիսի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ տարածաշրջանային այցով Թբիլիսիում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ:

Հանդիպման ավարտից հետո տարածված հաղորդագրության մեջ ասվում է, որ կողմերը քննարկել են տարածաշրջանում առկա իրավիճակը եւ աշխարհաքաղաքական նոր միջավայրը: Ուշադրություն է դարձվել, թե ինչ դեր կարող է ունենալ Վրաստանը՝ տարածաշրջանային անվտանգության համատեքստում: Նշվել է, որ Վրաստանն այս ուղղությամբ ԱՄՆ-ի լիակատար աջակցությունն ունի:

Զրույցը հիմնականում վերաբերել է Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացին: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի պաշտոնակատարը բարձր է գնահատել այն առաջընթացը, որը Վրաստանը գրանցել է ՆԱՏՕ-ին ին-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱԺԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱԺՐԵԺ ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ ՈՒ ՄԵՍԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադիր, Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, որը ամիսներ առաջ հայտարարել էր կուսակցությունից դուրս գալու եւ քաղաքականությունից հեռանալու մասին, չկարողացավ անմասն մնալ վերջին ժամանակներում երկրում ծավալվող իրադարձությունների, առանձնապես՝ երկրի նախկին վարչապետ, «Վրացական երազանքի» ղեկավարներից մեկի՝ Գիորգի Գախարիայի «Հանուն Վրաստանի» կուսակցության կազմավորման եւ այդ կապակցությամբ նրա կողմից նախկին զինակիցների հասցեին քննադատական ելույթների հարցով եւ հանդես եկավ հատուկ հայտարարությամբ:

Ստորեւ, աննշան կրճատումներով ներկայացնում ենք այդ հայտարարությունը:

- Ինչպես հայտնի է հասարակությանը, քաղաքականությունից հեռանալուց հետո, ես ուղղակի կամ անուղղակի հայտարարություններ չեմ արել Վրաստանում ընթացող քաղաքական գործընթացների վերաբերյալ: Նույնիսկ այն ժամանակ, երբ ընթացիկ տարվա փետրվարին պետությունն ու իշխանությունները կանգնել են լուրջ քաղաքական մարտահրավերի առջեւ, ես իմ դիրքորոշումը չհայտնեցի, որպեսզի ոչ մեկին իմ քաղաքական հետաքրքրության մասին շահարկումների պատրվակ չտրամադրեմ:

Քաղաքականությունից հեռանալու ֆոնին, բնականաբար, ես չեմ կտրել կապերը հասարակու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ - ՎՐԱՍՏԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հունիսի 7-ին Վրաստանի աշխատանքի, առողջության եւ սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի առողջապահության նախարարության եւ Arbeiter-Samariter-Bund (ASB) գերմանական կազմակերպության միջեւ ստորագրվել է Փոխհամագործակցության հուշագիր:

Վրաստանը եւ Հայաստանը միասին կարող են համագործակցել արտակարգ իրավիճակներում: Այս ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել աղետների ռիսկի կառավարման համակարգը, կարողությունների զարգացումը եւ միջսահմանային համագործակցության մեխանիզմները: Այս մասին հաղորդում է Վրաստանի աշխատանքի, առող-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

ԼԵՎԱՆ ԿԱԿԱՎԱ

Լրացավ Վրաստանում լույս տեսնող հայալեզու «Վրաստան» («Սաքարթվելո») թերթի հիմնադրման 100-ամյակը:

Հոբելյանի առիթով շնորհավորում եմ թերթի խմբագրակազմին, ընթերցողներին եւ, առանձնապես, թերթի գլխավոր խմբագիր պարոն Վան Բայբուրթյանին, ով նպաստում է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ հանդուրժողականության հաստատմանը, մշակույթի զարգացմանը:

«Վրաստան» թերթը Վրաստանում լույս է տեսնում 1920 թվականից եւ տարածվում է ողջ երկրի տարածքում: Վստահությամբ կարելի է ասել,

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱԽՈՍ «ՎՐԱՍՏԱՆԸ» ՀԱՐԱԶԱՏ ԵՆ ԻՆՁ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

Թբիլիսիում հայերեն լույս ընծայվող «Վրաստան» թերթի հարյուրամյակի առթիվ ասված իմ խոսքը մասնավոր է լինելու: Թերթն ու երկիրն ինձ համար նույնանում են: Կյանքից գիտենք, Վրաստանը հայոց համար սոսկ երկիր չէ: Մենք՝ քրիստոնյա ժողովուրդներս, ոչ միայն կողք կողքի ենք ապրել, այլեւ՝ միմյանց մեջ: Մեր եղբայրությունը պատմական ու արմատական լինելուց բացի, շարունակվող կյանք է, կենսակերպ, ինչպես ասում են, օդ ու ջուր: Ինձ համար, օրինակ, Վրաստանը ծնունդ է, տուն ու տեղ է, մանկություն է, խաղաղ ու հանգիստ բնօրրան:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԴԱՌՆԱ ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ

Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ափաթուրայի հայտարարությամբ, ներկայումս քննարկվող ՆԱՏՕ-ի գագաթաժողովի կոմյունիկեն կանդրադառնա վրացիներին հետաքրքրող չորս հիմնական հարցերի:

- Նախ, դա կլինի հզոր հաղորդագրությունը, որ ՆԱՏՕ-ի դուռը դեռ բաց է: Ինչպես վրացիները գիտեն, մենք նոր ենք ընդունել երկու նոր անդամների՝ Հյուսիսային Մակեդոնիան եւ Մոնտենեգրոն: Սա ապացույց է, որ Դաշինքի դուռը իսկապես բաց է:

Երկրորդը կլինի ամուր ուղերձ մասնավորապես Վրաստանին, որ ՆԱՏՕ-ն հավատարիմ է Բուխարեստի գագաթաժողովում ընդունված որոշմանը, եւ որ Վրաստանը հաստատ կդառնա ՆԱՏՕ-ի անդամ: Միաժամանակ, մենք մեկ անգամ եւս շնորհակալություն ենք հայտնում Վրաստանին այն ամենի համար, ինչ նա անում է: Ես նկատի ունեմ միջազգային անվտանգության ու կայունությանը նպաստելու գործողությունները,- հայտարարեց Ջեյմս Ափաթուրայը:

Նրա խոսքով, Վրաստանին վերաբերող երրորդ կետը ներառում է Սեւ ծովը:

- Սեւ ծովում անվտանգության տեսանկյունից իրավիճակը վատթարացել է, եւ դա տեղի է ունենում Ռուսաստանի պատճառով: Այդ թվում՝ Ղրիմի բռնակցման եւ այն պատճառով, ինչ կատարվում է Վրաստանում: Ես ակնկալում եմ, որ ՆԱՏՕ-ի կոմյունիկեում նշվելու է ոչ միայն այն, որ Դաշինքը գիտի այդ մասին, այլ որ ՆԱՏՕ-ն քայլեր է ձեռնարկում այդ կապակցությամբ՝ Վրաստանի եւ Ուկրաինայի ներգրավմամբ,- ասել է Ափաթուրայը:

Ըստ նրա, չորրորդ հարցը կվերաբերի համապարփակ թեմանային, որի շրջանակներում ՆԱՏՕ-ն ընդունում է, որ կա աշխարհառազմավարական մրցակցություն ժողովրդավարական եւ ոչ ժողովրդավարական աշխարհների միջեւ:

ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տեգրվելու հարցում: Հանդիպմանը շեշտվել է, որ ԱՄՆ ղեկավարությունը ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովում Վրաստանի գրանցած առաջընթացին հստակ կանդրադառնա:

- ԱՄՆ-ն աջակցում է Վրաստանի ինտեգրմանը եվրատլանտյան ինստիտուտներին, ներառյալ՝ ՆԱՏՕ-ին, եւ մենք հավատարիմ ենք 2008 թվականի ՆԱՏՕ-ի Բուխարեստի գագաթաժողովի հայտարարությանը, որ Վրաստանը կդառնա Դաշինքի անդամ: Նույնպես կարեւոր է մեր համագործակցությունը կովիդի տեսանկյունից: Ինչպես գիտեք, ԱՄՆ-ն աջակցում է Վրաստանին այս պայքարում եւ կօգնի Վրաստանին պատվաստանյութերի հարցում: Վրաստանը կլինի առաջին երկիրը, որը կստանա պատվաստանյութի որոշակի քանակություն՝ 25 միլիոն դեղաչափ: Ես կրկնում եմ, որ Միացյալ Նահանգները կշարունակեն աջակցել Վրաստանին, վրաց ժողովրդի ցանկությանը՝ ապրել զարգացած, բարեկեցիկ ժողովրդավարության մեջ, եւ մենք կկանգնենք ձեր կողքին,- հանդիպման ավարտին կայացած մամլո ասուլիսում ասաց Ֆիլիպ Ռիկերը:

Նշենք, որ ԱՄՆ դիվանագետը հանդիպումներ ունեցավ նաեւ Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Զալկալիանու, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի եւ ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ:

Ավելացնենք, որ, տարածաշրջանային այցի շրջանակներում, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի պաշտոնակատարը կայցելի Հայաստան եւ Ադրբեջան, որտեղ կհանդիպի կառավարության, քաղաքացիական հասարակության եւ բիզնեսի ոլորտի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու երկկողմ գերակայություններն ու Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցեր:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ

Հունիսի 8-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան ստորագրեց Վրաստանի խորհրդարանի անունից հունիսի 14-ին Բրյուսելում ՆԱՏՕ-ի գագաթաժողովի վերաբերյալ ընդունած համատեղ հայտարարությունը: Վրաստանի խորհրդարանում քաղաքական կուսակցությունների համատեղ հայտարարության մեջ նշվում է Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին ինտեգրմանն աջակցելու մասին, որ կուսակցությունները միասնական են Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությանը սատարելու հարցում:

Ինչպես նշեց Կախա Կուճավան, այս հայտարարությունը կներկայացվի հունիսի 14-ին ՆԱՏՕ-ի գագաթաժողովում:

- Սա մի փաստաթուղթ է, որը բոլոր պատգամավորները կկարողանան ստորագրել, եւ հիանալի օրինակ է այն մասին, որ կան հարցեր, որոնց շուրջ մենք կարող ենք միավորվել՝ ելնելով մեր ազգի, ժողովրդի շահերից: Կարեւոր է, որ բոլոր քաղաքական կուսակցությունները ստորագրեն այս փաստաթուղթը: Դա կարող է իրականացվել ինչպես բոլոր պատգամավորների, այնպես էլ՝ քաղաքական խմբի կամ կուսակցության անունից: Մենք բազմիցս ասել ենք, որ Վրաստանը պատրաստ է դառնալ ՆԱՏՕ-ի անդամ: Մենք լսել ենք բազմաթիվ սատարող հայտարարություններ այն մասին, որ Վրաստանն իսկապես արժանի է ՆԱՏՕ-ին անդամակցությանը: Կարելի է ասել, որ Վրաստանը շուտով կդառնա ՆԱՏՕ-ի անդամ: Մենք դրան պատրաստ ենք, դրա համար կա քաղաքական կամք,- ասաց Կախա Կուճավան:

ՎՐԱՍՏԱՆ - ԼԻՏՎԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԾՈՒԾԱԲԵՐՎԵԾ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

փազանց բարձր դինամիկան: Ուշադրություն հատկացվեց նաեւ Վրաստանի եւ Լիտվայի միջեւ տնտեսական համագործակցության խորացման կարեւորությանը, հատկապես հետհամաճարակային շրջանում, ինչը կնպաստի տնտեսական աճին եւ կխթանի ժողովուրդների միջեւ հարաբերությունները: Նշվեց, որ Լիտվան Վրաստանի ամենաակտիվ աջակիցներից է: Զրույցը վերաբերեց միջազգային կազմակերպությունների շրջանակներում Լիտվայի պատվիրակությունների հետ հաջող եւ արդյունավետ համագործակցությանը:

Խոսելով COVID-19-ով պայմանավորված մարտահրավերների մասին՝ հատկապես ընդգծվել է պատվաստանյութերի հասանելիության կարեւորությունը: Վարչապետը շնորհակալություն է հայտնել Լիտվայի նախագահին՝ Վրաստանին պատվաստանյութի 15 000 դոզա նվիրելու որոշման համար:

Ընդգծվել է Լիտվայի հստակ աջակցությունը Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին, քննարկվել են հետագա համատեղ գործունեության ու համակարգման հիմնական ուղղությունները:

Լիտվայի նախագահի պաշտոնական դիմավորման արարողությունը կայացավ Վրաստանի նախագահի Օրբելիանիների պալատում: Դրան հաջորդեցին Վրաստանի եւ Լատվիայի նախագահների առանձնազրույցն ու ընդլայնված կազմով բանակցությունները եւ համատեղ մամլո ասուլիսը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԸ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջապահության եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի փոխնախարար Գիորգի Ծոծկոլաուրու խոսքով, նախագիծը կարեւոր է ամբողջ տարածաշրջանի համար, հատկապես՝ համաճարակային պայմաններում:

- Կարծում եմ, որ տարածաշրջանի համար մեծ նշանակություն ունեցող նախագիծ է սկսվել: Համաճարակն ու բնական աղետների սրումը ցույց են տվել, որ երկրներում աղետներին պատրաստ լինելն ավելի ու ավելի է կարեւորվում: Հուսով եմ, որ միջազգային գործընկերների աջակցությամբ, մեր հայ գործընկերների հետ միասին, մենք կկարողանանք ստեղծել արդյունավետ մեխանիզմներ աղետներին համատեղ արձագանքելու համար,- ասել է փոխնախարարը:

Փոխհամագործակցության հուշագիրը Վրաստանի կողմից ստորագրել է փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի փոխնախարար Գիորգի Ծոծկոլաուրին, իսկ Հայաստանի կողմից՝ ԱՆ առաջին տեղակալ Լենա Նանուշյանը:



ԱՄՆ ՁԻՆՏԵԽՆԻԿԱՆ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՎՈՒՄ ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ

Միացյալ Նահանգների Զինված ուժերի եւ զինտեխնիկայի ավելի քան 50 տոկոսն արդեն դուրս է բերվել Աֆղանստանից: Այս մասին հայտնել է ԱՄՆ ՁՈՒ կենտրոնական հրամանատարությունը:

Զո Բայդենի կողմից որոշման ընդունման պահից սկսած՝ Պենտագոնը ռազմական բեռների տեղափոխման նպատակով իրականացրել է 500 թռիչք:

Հիշեցնենք, որ Բայդենն ապրիլի 14-ին հայտարարել էր ամերիկացի զինծառայողներին Աֆղանստանից դուրս բերելու իր ծրագրերի մասին՝ նշելով, որ մայիսին մեկնարկած ծրագիրը մտադիր են ավարտին հասցնել մինչեւ սեպտեմբերի 11-ը:

Պենտագոնի տվյալներով, ապրիլի վերջին Աֆղանստանում կար 2500 ամերիկացի զինվոր ու սպա: ՆԱՏՕ-ն եւս ուժերը դուրս է բերում Աֆղանստանից:

ԻՍՐԱՅԵԼ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՍՏԱՏՎԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ

Իսրայելի Կնեսետի (խորհրդարանի) խոսնակ Յարիվ Լեւինը հունիսի 8-ին որոշել է, որ, մարտի 23-ին կայացած ընտրությունների արդյունքներով, «Եշ ադիտ» կուսակցության առաջնորդ Յաիր Լապիդի կազմած կառավարության կազմը խորհրդարանի հաստատմանը կներկայացվի հունիսի 13-ին: Եթե նախարարների կաբինետի կազմը հաստատվի խորհրդարանի կողմից, կառավարությունը հենց նույն օրը երդում կտա, եւ կընտրվի Կնեսետի նոր խոսնակ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՉԵՂԱՐԿՎԵՑ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հունիսի 7-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրեց Ռուսաստանի Դաշնության կողմից Բաց երկնքի պայմանագրի (ԲԵՊ) դենոնսացիայի մասին օրենքը:

Փաստաթուղթը երկուշաբթի օրը՝ հունիսի 7-ին, հրապարակվել է իրավական տեղեկատվության պաշտոնական ինտերնետ-հարթակում: Մինչդեռ, մայիսի 27-ին ԱՄՆ-ը Ռուսաստանին պաշտոնապես ծանուցել էր ԲԵՊ վերադառնալուն անպատրաստ լինելու մասին: Բաց երկնքի պայմանագիրը (The Treaty on Open Skies) ստորագրվել է 1992 թվականի մարտի 24-ին Հելսինկիում՝ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) 23 պետությունների ներկայացուցիչների կողմից: Ռուսաստանը պայմանագիրը վավերացրել է 2001 թվականի մայիսի 26-ին:

ՂՐՂԶՍՏԱՆ-ՏԱՋԻԿՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՑ ԶՈՐՔԵՐԸ ՀԵՌԱՑՎՈՒՄ ԵՆ

- Ղրղզստանն ու Տաջիկստանը զորքերը դուրս են բերել երկու երկրների սահմանագծից,- հունիսի 6-ին հայտնել են Ղրղզստանի պետական սահմանապահ ծառայության մամուլի կենտրոնում:

Ղրղզստանի սահմանապահ ծառայության տվյալներով, Տաջիկստանի զինվորականները հունիսի 3-ի գիշերը սկսել են կոնտեյներ տեղադրել սահմանի չճշտված հատվածում եւ մոտ մեկ կիլոմետր խորացել են Ղրղզստանի Օշի մարզի տարածքում: Երկու երկրների սահմանին նախորդ բախումը, որը տեղի է ունեցել ապրիլի վերջին եւ երկու կողմերից խլել է ավելի քան 50 մարդու կյանք, տեղի է ունեցել մեկ այլ շրջանում՝ Ղրղզստանի սահմանամերձ Բատկենի մարզում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ

Հունիսի 9-ին Քութայիսիում կայացավ միջազգային օդանավակայանի բացման պաշտոնական արարողությունը: Ներկա էին վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Իրակլի Քարսելածեն եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք:

Դավիթ Աղմաշենեբելու անվան Քութայիսիի միջազգային օդանավակայանի հին տերմինալի մակերեսը կազմում էր 4800 քառակուսի մետր, իսկ ընդլայնման արդյունքում, տերմինալի ընդհանուր մակերեսը մեծացավ՝ հասնելով 30 000 քմ.-ի: Մինչ այժմ, եթե հին տերմինալը տարեկան կարողանում էր սպասարկել 600 հազար ուղեւորի, վերանորոգված տերմինալի դեպքում ուղեւորափոխադրումների հզորությունը հասնում է տարեկան 2,5 միլիոնի:

Վերանորոգված տերմինալի շինարարությունը սկսվել է 2017 թվականի նոյեմբերին: Տերմինալի ընդլայնումն/վերազինման արժեքն էր 35 միլիոն ԱՄՆ դոլար (110 միլիոն լարի):

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

ԼԱՇԱ ԴԱՐՍԱԼԻԱՆ՝ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Լաշա Դարսալիա

Վրաստանի վարչապետի կարգադրությամբ, Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ է նշանակվել Լաշա Դարսալիան, իսկ փոխնախարար՝ Թեյմուրազ Ջանջալիան:

Թեյմուրազ Ջանջալիա

Նշենք, որ Լաշա Դարսալիան դեռեւս 2018 թվականից զբաղեցնում էր ԱԳ փոխնախարարի պաշտոնը: Նա Վրաստանը ներկայացնում էր Ժնեւի միջազգային բանակցություններում: Մինչ այդ, 2017-2018 թվականներին Լաշա Դարսալիան հաշտեցման եւ քաղաքացիական ինտեգրման հարցերով պետնախարարի առաջին տեղակալն էր: 2002-2006 թվականներին Լոնդոնի տեղեկատվական կենտրոնում աշխատանքի ժամանակ նա 2004-2005 թվականներին այդ կազմակերպության մենեջերն էր Հայաստանում իրականացվող նախագծերի հարցով, իսկ 2005-2006 թվականներին Հարավային Կովկասում իրականացվելիք նախագծերի համակարգողն էր:

Թեյմուրազ Ջանջալիան 1998 թվականից դիվանագիտական ծառայությունում է: Նա Վրաստանը ներկայացրել է Լատվիայում, տարբեր պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի ԱԳ նախարարության համակարգում: Եղել է նախարարության միջազգային հարաբերությունների դեպարտամենտի տնօրենը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԻԱԿԸ, ՈՐԸ ԿՐՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՆՈՒՆԸ

ԹԲԻԼԻՍԻԻ ԱՅՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՆՇՎԵՑ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ

Հունիսի 6-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին տոնեց Սուրբ էջմիածնի տոնը: Տոնի առիթով Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց Սուրբ եւ Անմահ պատարագ:

Տոնական Սուրբ պատարագը, մատուցեց Տեր Կիրակոս քահանա Սիմոնյանը:

Հընթացս Սուրբ պատարագի պատարագիչ-քահանան փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությունը եւ բարեմաղթությունը տոնի առիթով:

Հավարտ Սուրբ պատարագի, եկեղեցու բակում արժանավոր հայորդի Արմեն Պետրոսյանի կողմից բաժանվեց մատաղ, իսկ Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության աջակցությամբ տեղի ունեցավ տոնական հյուրասիրություն:

Աշխարհով մեկ սփռված Հայ Առաքելական եկեղեցիների անունները ծանոթ են եւ նույնիսկ շատ դեպքերում կրկնվում են: Բայց աշխարհում կա միայն մեկ հայկական եկեղեցի, որի անունը ուրիշ ոչ մի տեղ չի կրկնվում, եւ այդ միակը Թբիլիսիի Հավլաբար թաղամասի կենտրոնում գտնվող Սուրբ էջմիածին եկեղեցին է, որն իր անունը ստացել է թբիլիսցիների ծախսերով եւ վաղարշապատցի (էջմիածնեցի) վարպետների ձեռքով 1806 թվականին կառուցվելու շնորհիվ:

Կրելով էջմիածնեցոց Սուրբ Գեւորգ անունը՝ հիմնարար վերանորոգումից հետո, 2011 թվականին եկեղեցին վերաօծվեց՝ կոչվելով Սուրբ էջմիածին:

Այսօր Սուրբ էմիածին եկեղեցուն կից գործում է «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնը (բացվել է 2011 թվականին՝ բարերար, վիրահայ գործարար Բորիս Սահակովի աջակցությամբ):

Հիշեցնենք, որ դեռեւս 1921թ. Հովհաննես Թումանյանը ներկայիս Ինգորողվա փողոցի վրա գտնվող Ավան-Յուզբաշյանի տանը հիմնեց հայ արվեստի օջախ «Հայարտունը», որը գործեց մինչեւ 1940 թվականը:



ԱՊՐԻԼԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 44,8 ՏՈԿՈՍ

Հունիսի 10-ին երկրի կառավարության նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի տնտեսության աճը 2021 թվականին, ըստ լավատեսական սցենարի, կկազմի 10, իսկ ըստ վատագույն սցենարի՝ 7 տոկոս:

Վրաստանի կառավարությունը 2021 թվականին երկրի տնտեսական աճի կանխատեսումը վերանայել է 4,3 տոկոսից մինչեւ 6,5 տոկոս: Ֆինանսների նախարարությունը դիտարկում է իրադարձությունների զարգացման երեք սցենար: Լավատեսական սցենարի համաձայն, կանխատեսվում է զբոսաշրջության ավելի արագ աճ՝ 2019 թվականի 40-45 տոկոսի մակարդակով: Ենթադրվում է դինամիկ տնտեսական աճ նաեւ տնտեսության մյուս հատվածներում: Վարչապետի խոսքով, տնտեսության վերականգնումն արդեն սկսվել է, իսկ ապրիլին գրանցվել է 45 տոկոս աճ, ինչն աննախադեպ ցուցանիշ եւ բացառիկ դեպք է: Մայիսին մենք նույնպես սպասում ենք բարձր ցուցանիշի: Համապատասխանաբար, տնտեսությունը վատագույն սցենարով կաճի 7, իսկ լավատեսականով՝ ավելի քան 10 տոկոսով:

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա ապրիլին երկրի համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) աճեց ռեկորդային (տարեկան հաշվառումով) 44,8 տոկոսով: Աճի նման տեմպերն առնչվում են անցյալ տարվա ապրիլին երկրում գործող համընդհանուր սահմանափակման ցածր բազայի վրա, երբ տնտեսական անկումը կազմեց 16,6 տոկոս:

Ընթացիկ տարվա ապրիլին, տնտեսական աճ է վավերացվել էկոնոմիկայի ոլորտներում: Միակ բացառությունը լեռնային արդյունաբերությունն էր: Համավարակի տարածումից հետո, առաջին անգամ մարտին երկրում վավերացվեց 4 տոկոսի տնտեսական աճ: Ծառայության տվյալներով, ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների ընթացքում ՀՆԱ-ի միջին աճը կազմել է 8,1 տոկոս:

ՀՐԱՏԱՊ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆԻՍԻ 16-Ի՞Ց ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՆԱՑՔԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ

...Ի ԴԵՊ, 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՆ ԷՐ

Հունիսի 7-ին, Վրաստանի կառավարությանն առնքեր միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստի ավարտին, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան հայտարարեց, որ հունիսի 15-ին Հայաստանի մայրաքաղաք Երեւանից կերթեւեկի Երեւան-Թբիլիսի-Բաթումիի գնացքը: Սա նշանակում է, որ համաձայն ավանդույթի, մեր դաշնակից ու հարեւան երկրից զբոսաշրջիկները նորից կժամանեն ինչպես մեր մայրաքաղաք, այնպես էլ կայցելեն մեր Սեւծովյան հանգստավայրեր:

Գնացքների երթեւեկության վերսկսման մանրամասները պարզելու համար «Վրաստան» թերթը դիմեց «Վրաստանի երկաթգիծ» ընկերության ուղեւորափոխադրումների ծառայության պետ Դաչի Ցագուրիային:

- Բատոնո Դաչի, նախ շնորհավորում ենք ուղեւորափոխադրումների ծառայության պետի պաշտոնում նշանակման առիթով: Դուք՝ որպես ուղեւորափոխադրումների ծառայության ղեկավար, հավանաբար ծանոթ եք «Անդրկովկասյան երկաթուղու» 19-րդ դարավերջի ուղեւորափոխադրումների ծառայության պատմությանը...

- Բնականաբար, ծանոթ եմ: Ըստ երեւույթին, ձեզ հետաքրքրում է, թե 1878 թվականին «Անդրկովկասյան երկաթուղու» բացումից հետո, ո՞վ է գլխավորել իմ այս ծառայությունը: Գիտեմ, որ գիտեք, հակառակ դեպքում, այս հարցով չէիք սկսի մեր հարցազրույցը,- ժպտալով պատասխանում է Դաչի Ցագուրիան եւ շարունակում,- դա նշանավոր դրամատուրգ, հայ դրամատուրգիայի հիմնադիր, այն օրերի Թիֆլիսի ինտելեկտուալներից մեկը՝ Գաբրիել Սունդուկյանն էր: Ընդ որում, պաշտոնին համապատասխան, նա ուներ երկաթուղայինի գեներալի կոչում:

Իմիջիայլոց ավելացնեմ, որ երբ տեղեկացա այդ մասին, առանձնակի հետաքրքրվեցի այս տաղանդավոր անհատականության գործունեությամբ: Պարզեցի, որ նրա ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Պեպոն», «Խաթաբալան» բեմադրվել են ոչ միայն հայկական, այլեւ այդ օրերի Թբիլիսիի վրացական թատրոնի բեմերում:

- Փաստորեն, առավել քան մանրամասն եք իրազեկված Ձեր գլխավորած ծառայության պատմությանը: Հիմա անցնենք «Վրաստանի» ընթերցողներին հետաքրքրող թեմային: Ինչպես հայտարարվեց, հունիսի 16-ից կսկսվի գնացքների երթեւեկությունը Երեւանի ուղղությամբ եւ հակառակը:

- Այո', նման որոշումը կայացվել է միջգերատեսչական համակագող խորհրդի նիստում: Սակայն, կցանկանայի ճշտել, որ հունիսի 15-ից կգործի Երեւան-Թբիլիսի-Բաթումի գնացքը: Եվ այդ գնացքը հունիսի 15-ին դուրս կգա Երեւանի կայարանից: Իսկ ինչ վերաբերում է Վրաստանի ու Հայաստանի մայրաքաղաքների միջեւ ավանդական գնացքի երթեւեկությանը, ապա այն, ամենայն հավանականությամբ, կբացվի ամառային սեզոնի ավարտին: Գծից կհանվի Երեւան-Թբիլիսի-Բաթումի գնացքը եւ կվերականգնվի Թբիլիսի-Երեւան-Թբիլիսի գնացքի երթուղին:

- Եկեք ավելի մանրամասնենք Երեւան-Թբիլիսի-Բաթումի երթուղին:

- Ինչպես արդեն ասացին, հունիսի 15-ին, ժամը 15:30-ին գնացքը դուրս կգա Երեւանից եւ Թբիլիսի կհասնի գիշերվա ժամը 00:11-ին: 20 րոպեանոց կանգառից հետո, գնացքը ուղեւորությունը կշարունակի Բաթումիի ուղղությամբ եւ Բաթումի կժամանի ժամը 07:30-ին: Բաթումիից դեպի Թբիլիսի-Երեւան գնացքը դուրս կգա 15:40-ին: Այդ գնացքը Թբիլիսի կհասնի ժամը 21:00-ին, իսկ ժամը 21:15-ին կշարժվի Երեւան եւ կժամանի ժամը 07:35-ին: Ավելացնեմ, որ ցանկացողները Թբիլիսիից Երեւան կամ Բաթումի ուղեւորվելու համար կարող են նախօրոք ամրագրել տոմսերը:

- Ի՞նչ կասեիք ուղեւորության տոմսերի գների մասին:

- Կուպե վագոնում տոմսի արժեքը Թբիլիսիից Երեւան կազմում է 102, ննջարանային (SV) վագոնում՝ 126, իսկ Թբիլիսիից Բաթումի՝ 91, ննջարանային (SV) վագոնում՝ 111 լարի:

Նշենք, որ Բաթումի-Թբիլիսի-Երեւան գնացքի ուղեւորատոմսերի արժեքը սահմանում է Հարավ-Կովկասյան երկաթուղին: 2008 թվականի փետրվարի 13-ին Երեւանում Հայաստանի Հանրապետության եւ «Ռուսական երկաթուղիներ» ընկերության միջեւ կնքվել է կոնցեսիոն պայմանագիր «Հայկական երկաթուղին» ռուսաստանյան «Հարավ-Կովկասյան երկաթուղու» կառավարմանը հանձնելու մասին: Համաձայն պայմանագրի, կոնցեսիոն կառավարման ժամկետը 30 տարի է, քսան տարվա աշխատանքից հետո, տասը տարով ժամկետի երկարացման իրավունքով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: «Հարավ-Կովկասյան երկաթուղին» իր գործունեությունն սկսել է 2008 թվականի հունիսի 1-ից:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱԺԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱԾՐԵԺ ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ ՈՒ ՄԵՍԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան ներկայացուցիչների հետ: Հասարակության համար կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություններ եմ ստանում ընտանիքի անդամներից, ընկերներից, հարազատներից, ծանոթներից: Նրանցից ես իմացա այն մասին, որ իբր, Գիորգի Գախարիայի կուսակցությունն իմ այսպես կոչված քաղաքական նախագիծն է: Քանի որ տեսնում եմ, որ, կեղծ տեղեկատվություն տարածելով, փորձ է արվում շարունակել իմ անունը կապել վրացական քաղաքականության հետ, ես ցանկանում եմ, մի փոքր բացատրություն տալ այս հարցի շուրջ:

Հանրությանը քաջ հայտնի է, որ արբանյակային կեղծ կուսակցությունների ստեղծումը Վրաստանում տարիներ շարունակ արատավոր պրակտիկա էր: Այնուամենայնիվ, նման բան երբեք չի եղել իմ ձեռագրի, 2011 թվականից մինչեւ քաղաքականությունից իմ վերջնական դուրս գալը, ես վրաց հասարակության շրջանում ոչ մի կեղծ կուսակցություն չեմ ստեղծել: Առավել եւս, բացառված է, որ քաղաքականությունից հեռանալուց հետո, նման բան կազմակերպեմ իմ կամ հասարակության համար:

Բացի նրանից, որ կեղծ կուսակցություն ստեղծելը ինքնին սխալ է, Գիորգի Գախարիայի հետ քաղաքական համագործակցությունն ինձ համար միանգամայն անընդունելի է: Այս տարիների ընթացքում մենք վրացական քաղաքականության մեջ ականատես ենք եղել բազմաթիվ քաղաքական սխալների, եւ ես կարծում էի, որ այս առումով ոչ ոք ինձ չի զարմացնի: Սակայն այն, ինչ արեց Գիորգի Գախարիան այս տարվա փետրվարին, ապշեցրեց ինձ:

Իշխող կուսակցության առաջնորդներից մեկը եւ ամենահզոր պետական պաշտոնյան բացարձակապես անհասկանալի ժամանակ, բացարձակապես անհասկանալի պատճառով հրաժարական տվեց. Նա հրաժարական տվեց, քանի որ չէր ցանկանում պաշտպանել օրենքի գերակայությունն ու օրենքի կատարումը, որին ձգտում էր ամբողջ քաղաքական թիմը: Նա պահանջում էր օրենքի կատարումը հետաձգել երկու օրով, որի մասին մենք համոզիչ բացատրություն չենք լսել: Գախարիայի դիրքորոշումն առավել քան անհասկանալի էր, որովհետեւ դրանից մի քանի օր առաջ նա ամբողջ թիմին համոզում էր Մելիայի անձեռնմխելիությունը վերացնելու անհրաժեշտության մեջ: Բարձր պաշտոնյայի նման վարքը, ինչ-որ չափով թյուրըմբռնման աստիճանի, դժվար թե կարողանանք գտնել նույնիսկ համաշխարհային քաղաքականության պատմության մեջ:

Գիորգի Գախարիայի փետրվարյան գործողությունը դավաճանություն էր նրա թիմի նկատմամբ: Եվ որ ավելի կարեւոր է, դա ուղղակի դավաճանություն էր սեփական պետության նկատմամբ: Ցավով կցանկանայի նշել, որ այս ամենը լուրջ հիասթափություն է առաջացրել ինձ մոտ:

Այս ամենի տրամաբանական շարունակությունը Գիորգի Գախարիայի կողմից քաղաքական կուսակցության ստեղծումն էր: Նրա կուսակցությունը չունի գաղափարական կամ հայեցակարգային հիմք, եւ այն միանշանակ նախատեսված է որպես իրավիճակային գործիք իշխող թիմի համար, նույնիսկ փոքր թվով ընտրական ձայներ հավաքելու համար:

Իմ սիրած ասացվածքներից մեկը՝ որոշ պատուհասներ օգտակար են: Ակնկալիք կար, որ Գախարիայի հրաժարականը կհանգեցնի քաղաքական ծանր ճգնաժամի: Սակայն, ինչպես տեսնում ենք, իշխող կուսակցության հզոր, առաջադեմ եւ փորձառու թիմը կարողացավ հեշտությամբ հաղթահարել դժվարությունները եւ ուժեղացնել պետական ինստիտուտները:

Կարեւոր է, որ իշխող կուսակցությունը կախված չէ անհատներից, եւ այն ուժեղ է՝ որպես միասնական թիմ, որը սիրում է երկիրը, ունի արժեքներ եւ ամուր պաշտպանում է պետության շահերը:

Հիմնական արդյունքներից մեկը, որին «Վրացական երազանքը» հասել է ինձ հետ եւ քաղաքականությունից իմ հեռանալուց հետո, հենց Վրաստանում անհատականության պաշտամունքի եւ մեսիականության արատավոր ավանդույթի ավարտն է: Ես խորապես համոզված եմ, որ իմ կողմից հիմնադրված կուսակցությունը շարունակելու է հաջողությամբ ապահովել պետության հզորությունը, ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանությունը, օրենքի գերակայությունը, ինչը պետության զարգացման անհրաժեշտ պայմանն է,- ասված է հայտարարության մեջ:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Մայիսի 28-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ստորագրեց «Վրաստանի քաղաքացիության մասին» օրգանական օրենքում կատարված փոփոխությունները, ըստ որի, քաղաքացիության ժամանակավոր վերականգնման եւ քաղաքացիության պահպանման իրավունքից օգտվելու ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ինչպես նշեցին նախագահի աշխատակազմում, Վրաստանի նախագահը ողջունում է տվյալ օրենքի ընդունումը եւ գործարկումը՝ հավելելով, որ Վրաստանի նախագահը երկքաղաքացիության հարցի շուրջ սկսել է աշխատել մի քանի տարի առաջ՝ որպես խորհրդարանի անդամ:

Տարածած տեղեկատվության համաձայն, ներկա փուլում Վրաստանի նախագահն ու արդարադատության նախարարությունը համատեղ աշխատում են Վրաստանի քաղաքացիության շնորհման, պահպանման եւ վերականգնման կանոնները պարզեցնելու ուղղությամբ:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ՊԱՀՊԱՆԵԼ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

«Վրաստանի քաղաքացիության մասին» օրգանական օրենքում կատարած փոփոխության համաձայն, Վրաստանի քաղաքացիությունը պահպանել կամ վերականգնել հնարավոր է մինչեւ 2022-ի դեկտեմբերի 31-ը: Մինչեւ 2022 թվականը քաղաքացիության հարցերը կարող են լուծել նաեւ բոլոր նրանք, ովքեր ծնվել են մինչեւ 1993 թվականը եւ այդպես էլ՝ ոչ մի երկրի քաղաքացիություն չեն ստացել:

Նշենք, որ 2020 թվականին քաղաքացիությունը պահպանելու կամ վերականգնելու խնդրանքով Վրաստանի պետական ծառայությունների զարգացման գործակալություն է դիմել 7 123 քաղաքացի:

Ինչ վերաբերում է քաղաքացիության պահպանմանը, ապա Վրաստանի քաղաքացիությունը հնարավոր է պահպանել, եթե անձը պետությունից համաձայնություն կստանա՝ պահպանել Վրաստանի քաղաքացիությունը՝ մինչեւ այլ երկրի քաղաքացիություն ստանալը: Եթե անձն արդեն համարվում է այլ երկրի քաղաքացի, բայց Վրաստանի քաղաքացիության կարգավիճակը դեռ չի դադարեցվել, հնարավորություն ունի մինչեւ 2022-ի դեկտեմբեր ամիսը ներկայացնել դիմում քաղաքացիությունը պահպանելու համար:

Քաղաքացիության վերականգնման կապակցությամբ, ըստ օրենսդրական փոփոխության, Վրաստանի քաղաքացիությունը կվերակագնվի, եթե անձը կորցրել է Վրաստանի քաղաքացիությունը՝ այլ երկրի քաղաքացիություն ստանալու պատճառով, եւ մինչեւ 2022-ի դեկտեմբերի 31-ը դիմի քաղաքացիությունը ժամանակավոր վերականգնելու համար: Այդ դեպքում անձը վրացերենով համապատասխան թեստ է անցնում: Ըստ կարգի, հնարավոր է նաեւ անչափահասի քաղաքացիությունը վերականգնել, եթե ծնողը վերականգնել է Վրաստանի քաղաքացիությունը:

Օրենսդրությամբ նախատեսվում է նաեւ հատուկ կարգով քաղաքացիության շնորհումը: Հատուկ կարգով քաղաքացիություն է շնորհվում, եթե անձը ծնվել է Վրաստանում, բայց Վրաստանի քաղաքացիություն չի տրվել, այս դեպքում, դիմողը վրացերեն՝ լեզվի, պատմության եւ իրավունքի հիմունքների քննություն է հանձնում: Քաղաքացիություն է շնորհվում այն դեպքում, երբ անձը ծնվել է 1975 թվականի մարտի 31-ից 1993-ի մարտի 31-ի ժամանակահատվածում, այդ ընթացքում ամենաքիչը 5 տարի ապրելով Վրաստանում, եւ չի ստացել այլ երկրի քաղաքացիություն:

Խորագիրը պատրաստեց Սիմոն Կիլաձեն

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

«ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ» ՄԻՇՏ ԱՅՆՏԵՂ Է, ՈՐՏԵՂ ՀՈՒՅԺ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

«Կարմիր խաչի» ընկերությունը Մառնեուլիում, Ախալքալաքիում, Սագարեջոյում եւ Վրաստանի այլ շրջաններում իրականացնում է «Աղետների կառավարում պարետային իրավիճակների ժամանակ» ծրագիրը:

«Կարմիր խաչի» ընկերության եւ նրա կողմից անցկացվող ծրագրերի մասին մանրամասն տեղեկություն ստանալու համար «Վրաստան»-ի թղթակիցը խոսեց «Կարմիր խաչի» Մառնեուլիի բաժանմունքի ղեկավար Նանա Տալախաձեի հետ:

- «Կարմիր խաչը» կառավարությանն օժանդակող անկախ կազմակերպություն է: Մենք օգնում ենք բոլորին առանց խտրականության: Ունենք տարբեր ծրագրեր. օրինակ՝ «Առաջին բուժօգնության ծրագիր» տարեցների եւ երիտասարդների համար: Տարեց մարդկանց մեր կամավորականներն օգնում են տարբեր հարցերում, իսկ երիտասարդների հետ աշխատում ենք նրանց ակտիվացնելու եւ ակտիվ քաղաքացի դարձնելու նպատակով: Համավարակը մեզ ցույց տվեց, թե որքան կարեւոր դեր է խաղում «Կարմիր խաչը» այս անտեսանելի վիրուսի դեմ պայքարում: Մեր կամավորականները լայնածավալ տեղեկատվական արշավ էին իրականացնում. վերապատրաստում էին քաղաքապետարանի աշխատակազմին եւ նրանց կամավորներին, մեծ քանակով սոցիալական փաթեթներ տրամադրում սոցիալապես անապահով եւ կարիքավոր ընտանիքներին: Իսկ այս նոր նախագծի նպատակը առանձին գյուղերում «Կարմիր խաչի» պատրաստված անձնակազմ ունենալ, որպեսզի որքան հնարավոր է շուտ կարողանան արձագանքել աղետներին:

Առաջին փուլում Մառնեուլիի շրջանից ընտրվել է 5 գյուղ՝ Կարմիրգյուղ, Ծերեթելի, Սամերլո, Խուլդարա եւ Խիխանի:

Յուրաքանչյուր վերապատրաստված խումբ կազմված է 15 կամավորականից: Նրանք անցել են վարժանքներ՝ առաջին բուժօգնություն, սոցիալ-հոգեբանական օգնություն, wash-ջրի հիգիենա, վարակիչ եւ ոչ վարակիչ հիվանդություններ, աղետների կառավարում եւ համայնքի վրա հիմնված վերահսկողություն:

Նախագիծն իրականացվում է «Կարմիր խաչի» եւ «Կարմիր մահիկի» միջազգային կազմակերպության, USAID եւ ԱՄՆ-ի աղետների օգնության գրասենյակի (USAID/OFDA) օժանդակությամբ Վրաստանում, Հայաստանում եւ Ադրբեջանում:

Հիշեցնենք, որ «Կարմիր խաչի» ընկերությունը 1863 թվականին հիմնադրել է շվեյցարացի բժիշկ եւ բիզնեսմեն Անրի Դյունանը: Ընկերության նպատակը օգնության ցուցաբերումն է ռազմագերիներին, վիրավոր ու հիվանդ զինվորներին, պատերազմական գործողություններում չներգրավված անձանց, իսկ խաղաղ պայմաններում՝ բնական աղետներից տուժածներին եւ վարակիչ հիվանդություններով տառապողներին, ծերերին ու սոցիալական խնդիրներ ունեցողներին, էթնիկ փոքրամասնություններին: Նշենք, որ Վրաստանում «Կարմիր խաչի» ընկերությունը գործում է 1918 թվականից, ունի մոտ 40 բաժանմունք տարբեր շրջաններում եւ 10000-ից ավելի կամավոր:

ԷԴԳԱՐ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Թբիլիսիի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախապատրաստական կուրսի ուսանող

ԼՈՒՐԵՐ՝ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻՑ

Նինոծմինդայի մունիցիպալիտետում ակտիվ շարունակվում են ենթակառուցվածքային աշխատանքները:

Սաթխա եւ Ջիգրաշեն գյուղերում ընթանում են փոքր մարզահրապարակի վերակառուցման շինարարական աշխատանքները: Այն իրականացնողը մրցույթում հաղթող անհատ ձեռներեց Ռազմիկ Ղումաշյանն է: Սաթխայի նախագծի պայմանագրային արժեքը 57 900, իսկ Ջիգրաշենինը՝ 63 000 լարի է: Աշխատանքներն իրականացվում են մունիցիպալիտետի տեղական բյուջեի միջոցներից:

Հեշտիա գյուղի մշակույթի տան վերականգնումն ընթացքի մեջ է: Աշխատանքներն իրականացնում է մրցույթի հաղթող անհատ ձեռներեց Վարդ Մկոյանը: Ծրագրի պայմանագրային արժեքը 59 200 լարի է:

Ընթանում են Մեծ Խանչալի-Կաթնատու ճանապարհների ասֆալտապատման աշխատանքները, որն իրականացնում է մրցույթում հաղթող ՍՊԸ «Զավախավտոգզա»-ն (նախագծի պայմանագրային արժեքը 1 465 000 լարի է):

ՍՐԲՈՒՀԻ ՍԱՆԱՄՅԱՆ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպչական բաժնի պետ